կով ճամբորդել է Կովկասեան Հայաստան, որի արդիւնքն է եղել նրա մի ուսումնասիրութիւնը՝ նուիրուած Էջմիածնի այսպէս անուանուած «Փղոսկրեայ Աւետարան» գրչագրի ուսումնասիրութեանը՝ արուեստի տեսակէտից: Այդ Աւետարանը, յայտնի է, մեր ամենահին ձեռագիրներից մէկն է:

Պատերազմից անմիջապէս առաջ պրոֆ. Ստրժիգովսկին գիտական նպատակով եւ այդ անգամ արդէն աւելի լայն ծրագրով նորէն այցելեց Հայաստան եւ յատուկ ուսումնասիրութիւններ կատարեց հայկական ճարտարապետութեան շուրջը: Իրեն օգնական եւ աշխատակից նա ունէր իր աշակերտ հանգուցեալ Լեւոն Լիսիցեանին, ինչպէս նաեւ իր հետազօտութիւններով ծանօթ մասնագէտ պ. Թորոմանեանին:

Այդ գիտական արշաւանքի արդիւնքը եղաւ պրոֆ. Ստրժիգովսկիի «Հայկական ճարտարապետութիւնը եւ Եւրոպան» երկհատոր հոյակապ աշխատութիւնը, որպէս մի կատարեալ յայտնութիւն գիտութեան համար, եւ որով Վիեննայի գիտնականը ապացուցում է, թէ հայկական ճարտարապետութիւնը ահագին ազդեցութիւն է գործել, Հարաւային Ռուսաստանի վրայով, Արեւմտեան Եւրոպայի քրիստոնէական ճարտարապետութեան վրայ:

Ստրժիգովսկիի այս տեսութիւնը ունեցաւ իր հակառակորդները, բայց նաեւ՝ պաշտպանները:

«Հայկականք» հանդէսի այս հատորի մէջ զետեղուած «Հայաստան եւ Եւրոպայի նախահռովմէական փայտաշէն ճարտարապետութիւնը» հետազօտութիւնը նպատակ ունի ցոյց տալու այն կապը, որ գոյութիւն ունի Հայաստանի եւ Եւրոպայի նախահռովմէական փայտաշէն ճարտարապետութեան միջեւ:

«Հիւսիսային Եւրոպայում կատարած իմ ուսումնասիրութիւնների ընթացքում — ասում է պրոֆ. Ստ. — ի մեծ զարմանս իմ, ես գտայ Ֆինլանդիայում (այնտեղի եկեղեցական փայտաշէն ճարտարապետութեան մէջ) մի այնպիսի ազդակցութիւն Հայաստանի հետ, որ ես սկսեցի տակաւ՝ Եւրոպայի ամբողջ հիւսիսում այդ բանի յետեւից լինել: Եւ ես հասայ այնպիսի արդիւնքների, որ նշանակալից է. նաեւ հայկական գեղարուեստի համար»:

* * *

Իոհաննէս Շվիգէր–ի ընդարձակ ուսումնասիրութեան առաջին մասն է առայժմ լոյս տեսել հանդէսի մէջ, որ կրում է «Տունը եւ փայտը որպէս սկիզբ մեծ արուեստի» խորագիրը: Ուսումնասիրութեան առարկայ կազմում են Հիւսիսային եւ Հարաւային Կովկասի իրականութիւնը — Լազիստան, Իմերեթիա, Մինգրէլիա, բուն Վրաստան (Քարթալինա), Կախեթիա, Սվանէթիա, Փշավների, Խեւսուրների, Թուշերի, Չերքէզների, Կաբարդիների, Արխազների, Կարաչայիների, լեռնային Թաթարների, Օսերի, Չէչէնների, Դաղստանի եւ Հայաստանի փայտաշէն ճարտարապետութիւնները:

Այնուհետեւ «Հայկականք»ի գիտնական խմբագիրը համառօտ դրախօսութիւններ է զետեղել դեռ եւս 1919–ին լոյս տեսած եւ հայագէտ պրոֆ. Մարբվարտի գրչին պատկանող «Հայոց ծագումը եւ վերականգնումը» աշխատութեան, ինչպէս եւ Շապուհ Բագրատունուն վերագրուող պատմութեան հրատարակութեան եւ պրոֆ. Ստրժիգովսկիի «Քրիստոնէական եկեղեցական արուեստը» ուսումնասիրութեան մասին:

Վերջում էլ առաջ է բերուած զանազան հանդէսների մէջ զետեղուած հայագիտական մի շարք կարեւոր հետազօտութիւնների ցանկը եւ եզրակացութիւններ այդ հանդէսների մասին:

Մեր ազգի եւ երկրի՝ հայ ու Հայաստան անունների բացատրութեան մէջ Դ–ր Ռոթ համաձայն է այն տեսակէտին, որ դեռ երկար տարիներ առաջ պարզել է պրոֆ. Ենզէն (Yensen) կապելով նրանց հիթիթների կայ հաթերի անուան հետ: Ինչ վերաբերում օտարների կողմից մեզ ու մեր երկրին տրուող անունների (Արմեն, Արմենիա) ծագման, Ռոթ ասում է, թէ դրանց ճշգրիտ լուծումը տալիս է Մարբվարտ:

Յայտնի է, որ դեռ եւս Դարեհի արձանագրութեան մէջ յիշւում է «Արմենիա» անունը, որ եւ համարուել է հնագոյն տեղեկութիւնը մեր ցեղի մասին: Մարքվարտ երեւան է հանում այդ անուան աւելի հին ձեւը Հոմերոսի մօտ, նրա այսպէս կոչուած «Նաւային ցանկում» (Իլիական, Բ. 783), ուր ի միջի այլոց